ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» հունիսի 2016 թվականի N:193 - Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐԴԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հանրապետության Շիրակի մարզի Բերդաշեն համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 16-ի N49 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 4-ի նիստի թիվ 5 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի մարտ 5-ի նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Վարդանուշ Բաղիշյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Տիգրան Հարությունյանի, Վահրամ Հարությունյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բերդաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Հարություն Բաբաջանյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Գարեգին Բաբաջանյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Կարինե Հովհաննիսյանի լիազորությունները:

2. Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Նարինե Մարաբյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի նոյեմբերի 14-ը:

3. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի նոյեմբերի 14-ին Խորհրդի կազմում հաստատված Գայանե Նահապետյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի նոյեմբերի 14-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Վարդանուշ Բաղիշյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լիլիթ Գորգինյանին, Մկրտիչ Ասատրյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բերդաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Համբարձում Ախցխեցյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արփինե Հովհաննիսյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Գրիգորի Զորօղլյանին:

6. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N106 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «08» N193-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐԴԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Բաղիշյան Վարդանուշ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Գորգինյան Լիլիթ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Ասատրյան Մկրտիչ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Ախցխեցյան Համբարձում	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Մարաբյան Նարինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Հովհաննիսյան Արփինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Նահապետյան Գայանե	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Զորոզյան Գրիգորի	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է